Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.
պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:
Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

24 SEP 2006
09 DEC 2009
CA 32-K 207

ԳԻՆԸ 12 ԿՈՊ

Ս. ԳՐՈՒԲՄԱՆ

ՓՈԽԱՐԻՆԱԽՄԲԻՆ ՀԵՐԹԱՊԱՀ ԽՄԲԻՆ ԲՐԻԳԱԴԻՆ ԽՄԲԻՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ԿՈՄՅԵՐԻՏՄԻՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆԸ

ՀԼԿՑԵՄ-ի Անդրյեբկոմի 2-րդ պլենումում արված զեկուցման վերամշակված տպագրությունը

1931

ԶԱԿԱՆԻԳ

10545

Տպ., Ա. Ֆ. Մյասնիկյանի անվան հրատարակչ. „Զարյա Վոստոկա"-ի
Պատվեր 2474. Գլավլիտ 1709. Քանակ 3000.

3KCMS 27 MAR 2013
-9--93

Նախ քան դիմել այն աշխատանքի լուսաբանությանը, որ կատարվել է Բազվի կազմակերպության կողմից նավթի վերաբերմամբ, յես կկամենայի ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի պլենումում նշել, որ 5—6 ամիս տեվող ամբողջ ժամանակաշրջանում բյուրոյի տվյալ կազմը յեվ Անդրյերկկոմի պլենումն իսկապես զբաղվում են նավթարդյունաբերության յեվ նրա զարգացման մեջ կոմյերիտմիության ունեցած մասնակցության հարցերով։ Ընդամենը 4—5 ամիս տեվողություն ունեցող կարճ ժամանակամիջոցում Անդրյերկկոմի բյուրոն յեվ նրա պլենումը յերկրորդ անգամն են լսում ԱԼԿՅԵՄ-ի ԲԿ-ի զեկուցումը նավթարդյունաբերության զարգացման մեջ Բազվի կազմակերպության տարած աշխատանքի յեվ ունեցած մասնակցության մասին։ Դա, հիմնականում, հանդիսանում է հետևանք ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի կողմից իր ուժերի ճիշտ դասավորումը պատասխանատու մասերում։ Մյուս կողմից, Բազվի կազմակերպությունը,— որ տանում է Անդրկովկասի պրոլետարական վաշտը, իսկապես գրավել է իր տեղը յերկրային կազմակերպության մեջ և կարող է յեղբայրական հանրապետությունների ու կազմակերպությունների հետ բաժանել Անդրկովկասում պատասխանատու մասերում իր տարած աշխատանքի փորձը։

ՄԵՆՔ ԶԵՌՔ ԵՆՔ ԲԵՐԵԼ ՎՃՌԱԿԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նավթարդյունաբերությունը հանդիսանում է արդյունագործության ոլորտներից մեկը, որ խոշոր դեր է խաղում վոչ միայն մեզ մոտ՝ Խորհրդային Միու-

թյան մեջ, այլ և վողջ աշխարհում։ Նավթարդյունաբերությունը, յերկրի ինդուստրիալիզացման և գյուղատնտեսության վերակառուցման հետ կապված, ստանում է հետզհետե ավելի մեծ նշանակություն։

Մեր ծանր ու թեթև արդյունագործության հրակայական աճումը, գյուղատնտեսական վերակառուցումը պահանջում են նավթարդյունաբերության զարգացման բոլշևիկյան տեմպեր։

Ի՞նչ ունենք մենք մեր առաջադրված պահանջների հետ կապված նավթի վերաբերմամբ, վորից կախված է ֆաբրիկաների, գործարանների և տրակտորների աշխատանքը դաշտերում։ Չնայած խորհրդային յերկրի ներսում և, մասնավորապես, նավթարդյունաբերության ներսում գոյություն ունեցող ՁԱՍԱՐԱԿ կազմակերպություններին, չնայած դասակարգային թշնամիներ՝ կատաղի ՀԱՅՔԱՐԻՆ, վորոնք խանգարում են պլանային կառուցումն ու նավթարդյունաբերության զարգացումը, Բագվի պրոլետարիատը, կուսակցության ղեկավարության ներքո, կարողացել է ձեռք բերել հերոսական հաջողություններ, իրագործելով նավթային հնգամյակը 2 յեվ կես տարում։

Նավթային հնգամյակն իրագործելով 2 և կես տարում՝ խորհրդային իշխանությունը և կուսակցությունը ցույց տվին, թե վորչափ մեր պլանը վոչ միայն կարող է իրագործված լինել, այլ և գերակատարված՝ կուսակցության գլխավոր գծի հետևողական իրագործման հիման վրա, Բագվի պրոլետարիատի անսպառ յեռանդի ու աշխատանքային ենտուզիազմի շնորհիվ, պրոլետարիատի, վորը կուսակցության ղեկավարության ներքո, իր հնգամյակը 2 և կես տարում իրագործելու ֆակտորով խորտակիչ ընդդիմադրություն տվավ բոլոր թերահավատներին, աջ և «ձախ» ուկլոնիստներին ու աջ-«ձախերի» բլոկի մնացորդներին Անդրկովկասում։ Նավթի հնգամյակի իրագործումը 2 և կես տարում կործանիչ հարված տվավ բուրժուազիային, ինտերվենտներին, հակաձայնականներին։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
59392-66

Մոտ անցյալում, 1930 թվականի սեպտեմբերին, խորհրդային նավթը գրավում եր 3-րդ տեղը վողջ աշխարհում։ Առաջին տեղը բռնում եր Ամերիկան, 2-րդը՝ Վենեցուելան, 3-րդը՝ խորհրդային նավթը։ Կարճ ժամանակվա ընթացքում Բագվի բանվորների ջանքերով ու գրոհով, կուսակցության ղեկավարության ներքո, ավարտելով նավթի հնգամյակը, խորհրդային նավթը գրավեց 2-րդ տեղը վողջ աշխարհում, դուրս քշելով Վենեցուելան, և մեր նավթը ներկա մոմենտում բռնում է առաջին տեղը։ ՀԱՄՆ որեց-որ թուլացնում են իրենց աշխատանքի տեմպերը. ՀԱՄՆ-ում տեղի չի ունենում նավթահորերի փորում։ Ճգնաժամը, վոր զգացվում է կապիտալիստական յերկրներում, առանձնապես նավթի վերաբերմամբ ՀԱՄՆ-ում, յուրաքանչյուր ամիս, յուրաքանչյուր կվարտալում, իջեցնում է ցուցանիշերը նավթարդյունաբերության բոլոր ճյուղերի վերաբերմամբ։ Նրանց մոտ իրագործումն ընկնում է 10—15 տոկոսով, մինչդեռ մեզ մոտ նավթարդյունաբերությունը 1930 թվականին աճել է 30 տոկոսով, իսկ 1931 թվականին պետք է տա 41 տոկոս աճումն անցյալ տարվա համեմատությամբ։

Այդ փաստերը ցույց են տալիս, թե վորպիսի խոշոր քայլերով, վորպիսի տեմպերով է զարգանում, ինչ տեղ է գրավում նավթարդյունաբերությունը վոչ միայն Խորհրդային Միության մեջ, այլ և համաշխարհային մասշտաբով։

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՊԱՅՔԱՐ ՆԱՎԹԻ ՀԱՄԱՐ՝ ԱՍԵԼ Է ՊԱՅՔԱՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԳԾԻ ՀԱՄԱՐ

Պայքար նավթի համար Անդրկովկասի պայմաններում, առանձնապես Բագվի պայմաններում, դա կուսակցության գծի համար մղվող պայքարն է, դրա համար էլ ԱԼԿՅԵՄ-ի Բագվի կարմրադրոշ կազմակերպության աշխատանքի կենտրոնական տեղը հանդիսանում է նավթը։ Բագվի պայմաններում նավթը

հանդիսանում է այն կենտրոնը, որին յենթարկված է աշխատանքի ողջ սիստեմը, արտադրական ծրագրերի իրագործումն ու գերակատարումը, կուլտուրական շինարարության զարգացումն ու արագացումը, մասսայական աշխատանքի զարգացումը։ Ողջ ներմիութենական աշխատանքը յենթարկված է նավթին։ Ի՞նչ ունենք մենք մեզ մոտ ներկայումս, ինչ փաստեր կան, որպեսզի Բագվի կազմակերպությունը կարողանա Անդրյերկկոմի պլենումում պատմել այն հրսկայական աշխատանքի մասին, որ տարվել է նրա կողմից ՀԿԿ (բ) Կենտկոմի նոյեմբերի 15-ի որոշումներն իրականացնելու ժամանակաշրջանում և ՀԿԿ-ի (բ) Անդրյերկկոմի ու ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի հաջորդող որոշումները։

Հունվար-փետրվարի ժամանակաշրջանում, յերբ նավթի արդյունաբերությունը մոտենում եր իր առաջին հնգամյակի վերջավորությանը, Բագվի կազմակերպության գործողությունների ողջ ծրագիրը յենթարկված եր կուսակցության կենտկոմի վճիռների իրականացմանը։ Բագվի կոմյերիտմիությանը անհրաժեշտ եր գտնել իր տեղը այդ վճռի իրականացման գործում։ Պետք է ասել, որ այն ժամանակաշրջանից հետո, որի մեջ գտնվում եր ԱլկՅԵՄ-ի Բագվի կազմակերպությունը, այսինքն ղեկավարության փոփոխումները, պայքարներն աջ և «ձախ» թեքումների դեմ Ադրբեջանում, համագումարների ու կոնֆերենցիաների ժամանակաշրջանում, այդ ամենը որոշ չափով թուլացնում և կազմակերպության ուշադրությունը գրավում եր գործնական աշխատանքից նավթի արդյունաբերության մեջ։ ՀԿԿ-ի (բ) Կենտկոմի որոշումը հանդիսանում եր այն գլխավորը, որը չուներ Բագվի կազմակերպությունը, որի շնորհիվ կարելի յեր շուռ տալ Բագվի կազմակերպությունը, նրա բոլոր ողակները դեպի գործնական աշխատանքը։

Նավթի արդյունաբերության վերաբերմամբ նոյեմբեր 15-ի որոշման հիման վրա, մշակվեց Բագվի

կոմյերիտմիության գործողությունների կոնկրետ գործադրության պլանը, որի համաձայն սկսեց աշխատել ողջ Բագվի կազմակերպությունը։

Այդ որոշումն ստացվելու ժամանակաշրջանում Բագվի կազմակերպության համար գլխավոր ողակը հանդիսացավ կոմյերիտմիութենական ուժերի դասավորումը պատասխանատու մասերում նավթի վերաբերմամբ։ Բագվի կազմակերպությունն իր պլենումում այդ վճռի իրականացման վերաբերմամբ ստանձնեց պարտավորություններ, պարտավորվեց իր կազմակերպության բոլոր ողակները և բոլոր ողակների մասնակցությունը ներգրավել նավթարդյունաբերության մեջ, պատշաճ բարձրության վրա դնել հարվածայնությունն ու սոցմրցակցությունը, բանվոր մասսաներին, բանվոր յերիտասարդությանը մոտեցնել կուսակցության վճիռների իրագործմանը գործնական աշխատանքի մեջ։ Պետք է ասել, որ այդ աշխատանքը վատ չհաղորդվեց, ծավալվեց հսկայական աշխատանք, յուրաքանչյուր ողակում կազմակերպված եյինտասնյակ ու հարյուրավոր հարվածային կոմյերիտմիութենական բրիգադներ ձեռնարկություններում, հանքահորերում, գործարաններում, ֆաբրիկաներում և այլն, տասնյակ հարվածային փորողներ, ուր հազարավոր կոմյերիտմիութենական և բանվորական յերիտասարդներ համակված եյին հարվածային շարժումով։ Շնորհիվ հարվածայնության աճումի, շնորհիվ ուժերի ճիշտ դասավորման այդ մասերում՝ մենք նավթի հնգամյակի վերջում կոմյերիտմիության գծով հասանք խոշոր հաջողություններ։ Կոմյերիտ փորողների թիվը, որը Բագվի կազմակերպության համար որոշված եր 60, նավթի հնգամյակի վերջում հասցվեց մինչև 64-ի։ Ցավոք հայտնի յե, որ առանց փորելու նավթ չի ստացվի։ Ցավ անա 64 կոմյերիտ փորողներ լրացվեցին և ցույց տվին իսկական հարվածային աշխատանքի որինակ։

Փորումների մեջ տարվող հարվածային աշխատանքով մենք ձեռք բերինք այն դրույթները, որպիսիք տրված էին կուսակցության Կենտկոմի որոշումներում։ Մենք Կենտկոմի որոշումների իրականացման ժամանակ պարտավորվեցինք առանձին ոլորտների վերաբերմամբ իրագործել պլանները, առաջադրելով հանդիպական պլաններ։ Մինչև կուսակցության Կենտկոմի որոշումները՝ աշխատանքի շրջանում խոր նասոսների վերաբերմամբ կոմբերիտները անցան աշխատանքի 4 մարդուց 3-ով։ Այդ որոշումների իրականացման շրջանում բրիգադներն անցան աշխատանքի 2 մարդով, ավելացնելով աշխատանքի արտադրողականությունը և լավացնելով աշխատանքի որակը։

Շնորհիվ այդ մասերում ուժերի ճիշտ դասավորման, շնորհիվ նավթի հնգամյակի 2 և կես տարում իրագործելու վերաբերմամբ ցույց տրված բացառիկ ուշադրության՝ Բաքվի կոմբերիտմիությունն ընթացավ առաջին շարքերում արդի-նպլանի իրագործման յեվ գերակատարման մեջ։ Այդ նավթի հնգամյակի համար մղվող պայքարի մեջ Բաքվի կոմբերիտմիությունն աչքի ընկավ, որպես կուսակցության լավագույն ոգնականներից մեկը որոշումների իրականացման մեջ, որպես լավագույն առաջավոր ոգնականներից մեկը նավթարդյունաբերության ճակատում, որի համար պարգեվատրված է յեղել աշխատանքային կարմիր դրոշակի շքանշանով։

ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼ ՅԵՐՐՈՐԴ ՎՃՌԱԿԱՆԻ ԾՐԱԳԻՐԸ

Ցես կարճառոա կանգ կառնեմ այն խնդիրների վրա, որոնք ծառացած էին Ազնեֆտի առաջ 1931 թվականին։ Շահագործվող փորումի վերաբերմամբ ծրագիրը նախագծվում եր 518 հազար մետր 1930 թվականի 334 հազար մետրի հանդեպ, այսինքն շահագործվող փորումի վերաբերմամբ 1931 թվականին աճումը կազմում է 54,7 տոկոս։

Հետախուզական փորումի վերաբերմամբ հին տարածությունների վրա նշվում էին հետախուզումներ 85 հազար մետրի չափով՝ 1930 թվականի 56 հազար մետրի հանդեպ, այսինքն 1931 թ. հին տարածությունների հետախուզումների աճումը պետք է արտահայտվեր 49,4 տոկոսով։

Նավթ ստանալու վերաբերմամբ 1931 թվականին մենք պետք է ձեռք բերենք 15.337.000 տոնն նավթ և 500.000 տոնն գազ։ Դա կազմում է 41 տոկոսով գերաճում՝ հանդեպ 1930 թվականի։

Ազնեֆտի ծրագրի վերաբերմամբ վերամշակման բնագավառում միայն Բաքվի գործարաններում նշված է մշակել 9.821.545 տոնն, իսկ Բաթումի գործարանների հետ միասին 11.970.000, այսինքն 33,7 տոկոսով աճումն։

Բենզինի վերաբերմամբ՝ ծրագիրը նշե է 679.000 տոնն, այսինքն աճումն հանդեպ անցյալ տարվա 60 տոկոսով։

Արտահանման ծրագիրը ներկայացված է 1931 թվականին 4.391.000 տոննի համար, որն անցյալ տարվա համեմատությամբ տալիս է աճումն 44,2 տոկոսով։

Առաջին կիսամյակի համար մենք ունենք ծրագրի իրագործման հետևյալ պատկերը նավթարդյունաբերության վերաբերմամբ։

Շահագործվող փորումի վերաբերմամբ 200 հազար մետր, կամ 77,8 տոկոս, հետախուզական փորումի վերաբերմամբ հին տարածությունների վրա՝ 32.184 մետր, կամ 67,2 տոկոս։

Հետախուզումներ նոր տարածությունների վրա՝ իրագործման 88,3 տոկոս։ 5 ամսվա ընթացքում պետք է շահագործման մեջ մտնեին 403 փորված հորեր, բայց մտան ընդամենը 256. 5 ամսվա ընթացքում պակասորդը կազմեց 147։

Ինչով բացատրել շահագործման համար փորվող հորերի այդպիսի մեծ պակասորդը։ Այդ կարելի է բացատրել բոլոր փորվածքների յելք չունենալով, սարքավորման, ինվենտարի պակասությամբ, պատվիրների վոչ իր ժամանակին ստացումով, պատվերների, վորոնք պատրաստվում են Բագվից և Անդրկովկասից դուրս։ Բայց ինչ ել վոր լինի, 147 շահագործման համար փորված հորերի յելք չունենալը, նախնական հաշվով, այդ նշանակում է չստանալ 290 հազար տոնն նավթ։ 5 ամսվա ընթացքում խորքը գնալու արագության վերաբերմամբ փորվածքը տվել է 114 մետր, կամ առաջադրության 82 տոկոս։ Հետախուզական փորվածքի վերաբերմամբ հին տարածությունների վրա՝ 72 մետր, կամ առաջադրության 63 տոկոս։ Հետախուզական փորվածքի վերաբերմամբ նոր տարածությունների վրա՝ 56,6 մետր, կամ առաջադրության իրականացման 81 տոկոս։ Փորելու ինքնարժեքի ցածրացման վերաբերմամբ յեղած առաջադրությունը նույնպես 1-ին կիսամյակի ընթացքում չի իրագործված։ Շահագործման համար փորվածքի վերաբերմամբ ինքնարժեքը 5 ամսվա ընթացքում դուրս յեկավ ծրագրվածից նույնիսկ 5,5 տոկոսով բարձր, բայց անցյալ տարվանից ցածր 11 տոկոսով։ Բանից դուրս է գալիս, վոր այս տարի առաջադրությունը չի իրագործվել 5,5 տոկոսով, բայց անցյալ տարվա համեմատությամբ ունենք 11 տոկոս ցածրացում։ Հեռու տարածությունների վրա հետախուզական փորումի մեջ չիրագործված ունենք 10,5 տոկոս, անցյալ տարվա հանդեպ ունենք ցածրացում 22 տոկոսով։

ՏԵԽՆԻԿԱՆ Ե ՎՃՌՈՒՄ ՀԱՋՈՂ ՊԱՑՔԱՐԸ ՃԵՂՔՎԱԾՔՆԵՐԻ ԴԵՄ

Աշխատանքի արտադրողականությունը հունվարից մինչև ապրիլ ժամանակաշրջանում բարձրացած է 8,6 տոկոսով։ Չիրագործված հիմնական մոմենտները

հանդիսանում են տեխնիկական ղեկավարության պակասությունները։ Բագվի նավթարդյունաբերության մեջ մենք դեռ ևս չենք հասել կուսակցության կենտկոմի՝ փորումի վերաբերմամբ տեխնիկական ղեկավարության դասավորման մասին կայացրած վճռին, չենք հասել այն դրության, վորպեսզի փորողների յուրաքանչյուր խմբի, 2—3 փորող մեքենայի համար լիներ ինժեներ-տեխնիկ, տեխնիկական ձեռք, վորը մնասավարի հետ միասին կրեր պատասխանատվություն այդ փորելու աշխատանքի համար։

Ծրագիրը չիրագործելու մեջ դեր է խաղում նույնպես ցեմենտի, ճնշիչ խողովակների պակասությունը և, գլխավորապես, վորակյալ փորողների բացը։ Վոչ արտադրողական պարապույթների նշանակալից քանակություն ստացվում է ցեմենտի բացակայության հետևանքով։ Այդ ժամանակամիջոցի ընթացքում վոչ արտադրողական պարապույթներն արտահայտվում են 115,000 ժամով, կամ 159 կայանքային ամսով։

Փորելու վերաբերմամբ ծրագրի չիրագործման մեջ մեծ դեր է խաղում դուրերի (долота) վորակը, դուրի զոդումը և վերջին մի ջոցառումը—դուրի զոդումը սովորականից վեր հալոցքով։

Դուրի զոդման վերջին դյուտը՝ «ստալինիտում»ը յեվ «դոգնատ»ը՝ տալիս է վճռական հաջողություններ ու հնարավորություն մոտ ժամանակներում վերացնելու այն ճեղքերը, վորոնք գոյություն ունեն փորումի մեջ։

Վեց ամսվա ընթացքում ստացված է նավթ 6.399.929 տոնն, կամ 92,6 տոկոս։ Նավթի արդյունաբերությունը յուրաքանչյուր որ տատանվում է։ Այստեղ խոշոր նշանակություն է ստանում այն աշխատանքը, վոր տարվում է խոր նասոսների վերաբերմամբ, անցքերի, ֆոնտանների խելացի ոգտագործումը և, գլխավորապես, զգույշ վերաբերմունքը շերտերի հետ։ Հաճախ, շնորհիվ առանձին աշխատողների ա-

նուշադրության, ստացվում է ջրաբաշխում, փլվածք՝ անցքերում, ստացվում է նավթի անհետացումը շերտերից և շատ դիպվածներ, վորոնք անդրադառնում են նավթի կանոնավոր արդյունաբերության վրա։

Չնայած այդ ամենին, մենք անցյալ տարվա համեմատությամբ ունենք աճումն 29 տոկոսով։ Տոնի ինքնարժեքի ցածրացում՝ 1930 թվականի հանդեպ 20,2 տոկոսով։

Նավթի պակասորդի հիմնական պատճառը նույնպես հանդիսանում է փորումը։ Ցեխ արդեն սկզբում ասացի, վոր փորումը խոշոր նշանակություն ունի արդյունաբերության մեջ։ Այստեղ նա իրեն զգալ է տալիս։ Արդյունաբերության վերաբերմամբ ծրագրի չիրագործումը տեղի ունի շնորհիվ իր ժամանակին փորող մեքենաները շահագործման չհանձնվելու, շնորհիվ փորող մեքենաների սխալ ոգտագործման, հանքերի՝ փորող մեքենաները շահագործման համար ընդունելու անկարության, նշված պլանով բոլոր փորող մեքենաները (147) համապատասխան մասերին չհանձնելու, շնորհիվ իր ժամանակին գործիքները հայթայթելու բացակայության, շնորհիվ տրակտորների սխալ ոգտագործման։ Այդ ամենը միասին վերցրած՝ տալիս է ահագին կորուստ արդյունաբերության մեջ, վորոնք մոտավորապես արտահայտվում էին 135,000 նավթահոր-ժամով, կամ շահագործման 188 նավթահոր-ամսով։ Թվերով այդ կորուստը կարտահայտվի մոտավորապես 290,000։ Մենք կորցնում ենք այդքան շնորհիվ ուժերի սխալ դասավորման, տրակտորների սխալ բեռնավորման, ժամանակին գործիքներ չհայթայթելու, փորող մեքենաները շահագործման մեջ չդնելու, շնորհիվ հենց փորումի մեջ սխալ շահագործման, փորումի վերաբերմամբ տարվող անզգույշ աշխատանքի, դժբախտ պատահարների, վորոնք այս ամսին հասան 980-ի։ Այդ ամենը միասին հանդիսանում են արդյունաբերության վերաբերմամբ ծրագրի թերակատարման հետևանք։

Հինգ ամսվա ընթացքում գազ ձեռք է բերված 151,000 տոննն, անցյալ տարվա համեմատությամբ աճումն յեղել է 95,5 տոկոսով։ Գազի արդյունաբերության մեջ բացը հանդիսանում է տեղափոխումը, խողովակների պակասությունը, վորը հնարավորություն չի տվել շահագործվող փորվածքից գազը տեղափոխելու գազի գործարանները, գազի կորուստը նավթից ստանալու միջոցին, նավթահորից ձեռք բերելու ժամանակ։ Սարքավորման պակասությունը, ժամանակին սարքավորման բացը տալիս են գազի ահագին կորուստ։

Նավթի մշակման վերաբերմամբ ծրագիրն իրագործված է 98,3՝ տոկոսով։ Աճումն անցյալ տարվա համեմատությամբ՝ 21 տոկոսով։ Բենզինի վերաբերմամբ ծրագիրն իրագործված է 95,5 տոկոսով, աճումն անցյալ տարվա համեմատությամբ՝ 25 տոկոսով։ Կերոսինի վերաբերսամբ ծրագիրն իրագործված է 91 տոկոսով, ավտոլանի վերաբերմամբ 85,8 տոկոսով։ Աճումն անցյալ տարվա համեմատությամբ 96 տոկոսով։ Առաջադրությունների ծրագիրն ինքնարժեքի վերաբերմամբ գերազանցում է 2 տոկոսով, անցյալ տարվա համեմատությամբ ցածրացված է 14 տոկոսով։ Այդպիսով՝ մենք տեսնում ենք, վոր գների և ինքնարժեքի ցածրացման գործում շահագործման ու փորելու վերաբերմամբ 1931 թվականի առաջադրությունը չի իրագործված։ Բայց անցյալ տարվա համեմատությամբ շատ է քչացած։ Այդպիսով, այնուամենայնիվ, պիտք է նշել, վոր հիմնականում Ազնեֆտի կողմից 1931 թ. առաջին կիսամյակի համար մատնանշված ծրագիրը չի իրագործված յե՛վ վոչ մի ուղղությամբ — վո՛չ արդյունաբերության վերաբերմամբ, վո՛չ մշակման վերաբերմամբ, վո՛չ ել փորելու վերաբերմամբ։

Ի՞նչ դեր է խաղում Բաքվի կոմբինատիությունը նավթային ծրագրի իրականացման գործում նավթի հնգամյակը 2 և կես տարում ավարտելուց հետո։ Կոմ-

յերիտմիության աշխատանքը հիմնականում նպատակ ուներ ամրապնդել այն ենտուզիազմը, որը գոյություն ուներ բանվոր յերիտասարդության մեջ, առաջնորդել դեպի հետագա պայքարը՝ իրագործելու յեվ գերակատարելու համար արդիֆինպլանը մեր աշխատանքի առանձին մասերում յեվ առանձին ոլորտներում։ Այդ ժամանակաշրջանում մենք վոլշ կազմակերպության մեջ ստացանք խրախույս ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի վորոշման ձևով Անդրյերկկոմի բյուրոյում արված զեկուցումից հետո՝ Բագվի կազմակերպության աշխատանքի մասին նավթարդյունաբերության հնգամյակի իրականացման գործում։ Անդրյերկկոմի այդ վորոշումը կազմեց Բագվի կազմակերպության հետագա աշխատանքի հիմքը։

Անդրյերկկոմի բյուրոյի վորոշման հիման վրա և այն խրախույսի, վորը մենք ունեյինք և վորը վորոշում եր Բագվի կազմակերպության աշխատանքը՝ մենք բոլոր ոլորտների վերաբերմամբ հայտարարեցինք արդյունաբերության մեջ կոմյերիտմիության մասնակցության տնտեսատես-ստուգումն, հարվածայնության և սոցմրցակցության ստուգումն ավելի բարձր ցուցանիշների համար մղվող պայքարում՝ ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի բյուրոյի, Համկոմկուսի (բ) Անդրյերկկոմի և Համկոմկուսի (բ) Կենտկոմի նոյեմբեր 15-ի վորոշումն իրագործելու անկյան տակ։ Պետք է ասել, վոր այդ ժամանակամիջոցում մենք ունեցել ենք կոմյերիտական փորոձների, մասերի, դրույթների, բրիգադների, ցեխերի յեվ այլն խոշոր թիվ։ Ցեթե նավթի հնգամյակն ավարտելու ժամանակաշրջանում մենք հասել ենք մեծ հաջողությունների՝ ուժերի դասավորման գործում, հարվածային բրիգադներ ստեղծելու գործում, ապա ներկայումս արդեն Անդրյերկկոմի վորոշման ստացումով, վորը հանդիսանում եր Բագվի կոմյերիտմիության գործողությունների ծրագիրը, մեզ անհրաժեշտ եր մեր բոլոր ուժերը գործադրել Կենտկոմի նոյեմբերյան պլենումի վորոշումների հետագա

իրականացման և ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի վորոշումների իրացման վրա։ Ի՞նչ ունենք մեզ մոտ ներկայումս, աշխատանքի վերպիսի ցուցանիշեր՝ այդ վորոշման իրականացման գործում։

Փորելու վերաբերմամբ՝ 1931 թվականի յերկրորդ կվարտալի համար ծրագիրն իրագործված է (բացառապես կոմյերիտմիութենական փորումի վերաբերմամբ) Լենինյան ռայոնում կայանքային-ամսվա հաշվով 93 տոկոսով, անցքի վերաբերմամբ՝ 94,5 տոկոսով, անցքի արագության վերաբերմամբ՝ 101,4 տոկոսով. Սուրախանի ռայոնում ծրագիրն իրագործված է կայանքային-ամսվա հաշվով՝ 80 տոկոսով, անցքի վերաբերմամբ 80,3 տոկոսով, արագության վերաբերմամբ՝ 88 տոկոսով։ Բիբի-Հեյբաթի ռայոնում կայանքային-ամսվա հաշվով 100 տոկոսով, անցքի վերաբերմամբ՝ 90 տոկոսով, անցքի արագության վերաբերմամբ՝ 90,1 տոկոսով։ Բինաղադիի ռայոնում կայանքային-ամսվա հաշվով 81,8 տոկոսով, անցքի վերամերմամբ՝ 98,3 տոկոսով, արագության վերաբերմամբ՝ 120,3 տոկոսով։

Միջին թվով յերկրորդ կվարտալի ընթացքում մենք ունենք արագության վերաբերմամբ՝ իրագործման 99,9 տոկոս, իսկ անցքի վերաբերմամբ մետրով՝ ծրագրերի իրագործումն անբավարար է, այսինքն 88,5 տոկոս։

Տվյալ մասի բոլոր փորվածքների կամ նման փորվածքների համեմատությամբ կոմյերիտմիութենական փորումները տալիս են փայլուն հետևանքներ անցքի արագության վերաբերմամբ։

Այդպիսով՝ յերևում է, վոր կոմյերիտմիութենական փորվածքների արագության վերաբերմամբ ծրագրի իրագործման տոկոսն ավելի բարձր է, քան թեկ տվյալ հողամասի նման փորվածքների կամ բոլոր փորվածքների վերաբերմամբ։

БИБЛИОТЕКА ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

ԱՆՑՔԻ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄԱՄԲ ՀԱՄԿՈՄԿՈՒՍԻ (Բ) ԿԵՆՏԿՈՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ԳՈՐԾԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է

Եթե մենք համեմատենք մեկ ծակող հարվածով ստացվող անցքը, ապա կունենանք հետևյալը։ Կենտկոմի վորոշումներով առաջադրություն եր արված դուրը լիցքի վրա պահել հինգ ժամ, իսկ կուսակցության Ցերկրային Կոմիտեյի վորոշման մեջ առաջարկված եր դուրը պահել լիցքի վրա չորս ժամ։ Կոմյերիտմիութենական փորումների առանձին ողակներում կան փաստեր, յերբ դուրը լիցքի վրա մնում է $6^1/_2$—7 ժամ, բայց, վորպես պրակտիկա, վորպես հետևանք, զուտ հարվածի վերաբերմամբ յեղած միջին ցուցանիշերը հետևյալներն են. Լենինյան ռայոնում կոմյերիտմիութենական փորումների վերաբերմամբ մեկ հարվածից ստացված անցքը կազմում է 5,93 մ., Սուրախանի ռայոնում՝ 8,34, Նավահանգստում՝ 11,15, Բինագադիում՝ 3,45։

Փորումի բաժնի կոմյերիտմիութենական խումբը իր հողամասերում հասել է միջին թվով 310 մետր անցքի մեկ կայանքով՝ այն միջոցին, յերբ մյուս փորողներն այդ պայմաններում տալիս են ընդամենը 290 մետր անցք։ 7 ամսվա ընթացքում 814 փորողը ցույց տվավ գերազանց արագություն։ Նա 7 որվա ընթացքում տվավ 418 մետրանոց անցք։ 127 փորողը 300 մետր խորության միամսյա առաջադրությունը իրագործեց 50 մետր գերազանցությամբ և ժամկետից 2 որ առաջ ավարտումով։ Շատ են այդպիսի դեպքեր։ Սուրախանի ռայոնում 76/163 փորողը միամսյա ծրագիրն իրագործեց 2 շաբթում։ 78/144 փորողը 26 որվա ընթացքում փորեց 814 մետր։ 76/351 փորողը 5 որվա ընթացքում տվավ 320 մետրանոց անցք։

Կոմյերիտական փորումները տալիս են աշխատանքի լավ նմուշներ։ Լենինյան ռայոնում № 340 փորողը անցքի արագության վերաբերմամբ տվել է

59392.66

321 մետր մեկ կայանքով մի ամսում։ Այդ բոլոր ռորինակները հնարավորություն են տալիս Անդրյերկկոմի պլենումում հայտարարելու, վոր կոմյերիտական փորումներն արդեն տալիս են հետևանքներ և իրագործում են կուսակցության Կենտկոմի նոյեմբեր 15-ի վորոշումները, վորտեղ նշվում եր 1933 թվականին մեծ կայանքով հասնել 300 մետրի։ Մի քանի դեպքերում նրանք նույնիսկ գերակատարում են այդ վորոշումը։ Կոմյերիտմիութենական փորումների մեջ կատարված վողջ աշխատանքը չպետք է ծածկված մնա, հարկավոր է այն փորձը, վոր կատարել է Բաղվի կազմակերպությունը, հանձնել մյուսներին,- այսինքն հարկավոր է լրացնել, վերակազմել կոմյերիտմիութենական փորումները, վերցնել նրանցից կոմյերիտմիութենական փորումների կոչումը յեվ ընկերների, վորոնք դրական արդյունքներ են տալիս իրենց աշխատանքի մեջ, տեղափոխել այնպիսի փորումներ, այն մասերը, վորտեղ կան մեծ ճեղքվածքներ, ցուցանիշեր տվող լավ կոմյերիտական-հարվածայինները միացնել հասակավոր բանվորներին, ջանալ, վոր նրանք տան իրենց աշխատանքի փորձը, ունակությունը աշխատելու վոչ միայն իրենց փորումի մեջ, այլ և բոլոր մնացածներում, վորպեսզի կարելի լինի իրագործել այն առաջադրությունները, վորոնք տրվում են անցքի մետրերով յուրաքանչյուր մասում, յուրաքանչյուր ռայոնում ամբողջությամբ վերցրած՝ նրա համար, վորպեսզի կարելի լինի իրագործել կուսակցության Կենտկոմի և կոմյերիտմիության Անդրյերկկոմի վորոշումները մեկ կայանքով անցքի ամեն մի մետրի վերաբերմամբ։

Կոմյերիտմիության Անդրյերկկոմն առաջարկեց Բաղվի կազմակերպությանը դուրը լիցքի մեջ պահել վոչ պակաս, քան 5 ժամ։ Եթե ընկերները հիշում են, առանձնապես բաղվեցիները, մեզ մոտ կուսակցության Կենտկոմի վորոշումը քննելու ժամանակ մենք առաջադրեցինք հանդիպական թվեր և 4 ժամի փոխարեն

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ZUUՌ-Арм. ССР
Ա. ԽՄ. Ա. Մասիսյան
ՍՍՍՌ Գիտ. Ակադ.

դուրը լիցքի մեջ պահում էլինք 5 ժամ։ Իսկ ունենք մենք այսոր։ Լենինյան ռայոնում կոմյերիտական փորումի վերաբերմամբ դուրը միջին թվով լիցքի վրա է պահվում 2,79 տոկոս, մնացած փորումների վերաբերմամբ 2,85, այսինքն ավելի, քան կոմյերիտական փորումների վերաբերմամբ։ Նման փորումների վերաբերմամբ դրանք պահվում են 2,76, այսինքն՝ 0,3-ով կոմյերիտական փորումներն առաջ են գնում։ Դուրը լիցքի վրա 0,3 ժամ ունի հաջողություն, բայց նրանք շատ պետք է քաշ դան տվյալ հողամասի փորումների յետևից։ Սուրախանի ռայոնում դուրը լիցքի վրա մընում է 4,11 ժամ, բոլոր փորումների վերաբերմամբ՝ 3,35։ Այստեղ կոմյերիտական փորումները տալիս են իրենց աշխատանքի ցուցանիշեր, դուրը լիցքի վրա թողնելու ունակության ցուցանիշեր ավելի, քան թե նման փորումների մեջ։ Նավահանգստում 4,35ը՝ կոմյերիտական փորումի վերաբերմամբ, 4,32՝ մնացած փորումի։ Բինաղադիում ԼԿՅԵՄ փորումը՝ 3,35 ժամ, իսկ ամբողջ փորումի վերաբերմամբ 3,07։ Այդպիսով, բացառությամբ Լենինյան ռայոնի, վորը բոլոր փորումների վերաբերմամբ դուրը լիցքի վրա չի պահում, մենք ունենք լավ հետևանքներ։ Մենք պետք է նշենք մի հանգամանք։ Բինաղադիում դուրը լիցքի վրա պահվում է ընդամենը 28—30—40 րոպե։ Այդ հանգամանքը բացատրվում է նրանով, վոր հողը պինդ է, վորի վրա աշխատում է տվյալ փորիչը, խիստ քարքարոտ։

Եթե համեմատենք վոչ արտադրողական ընդմիջումների տոկոսը կոմյերիտական փորումների և այդ մասերի փորումների վերաբերմամբ, ապա մենք կըտեսնենք հետևյալ պատկերը։ Լենինյան ռայոնը տալիս է կոմյերիտական փորումների վերաբերմամբ վոչ արտադրողական ընդմիջումներ 10,11՝ այն ժամանակ, յերբ մնացածների վերաբերմամբ՝ 20,6 տոկոս, ցածրացումը համարյա կիսով չափ։ Սուրախանի ռայոնը՝ 16,8, իսկ մնացած փորումների վերաբերմամբ՝ 15,6։ Այստեղ վոչ արտադրողական ընդմիջումները

կոմյերիտմիությունական փորումների վերաբերմամբ ավելի յեն, քան տվյալ մասի փորումների վերաբերմամբ։ Նավահանգիստը՝ 13,5՝ այն ժամանակ, յերբ բոլոր մնացածների վերաբերմամբ՝ 13,3 է։ Բինաղադին՝ 14,6, յերբ բոլոր մնացածների վերաբերմամբ՝ 25։ Ինչպես արդեն ասացի, վոչ արտադրողական ընդմիջումներն անմիջական կապ ունեն սարքավորման հետ, վորի միջոցով պետք է աշխատել։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՄԱՍԵՐՈՒՄ ՏԱԼԻՍ Է ԳԵՐԱԶԱՆՑ ՑՈՒՑԱՆԻՇԵՐ

Արդյունաբերության վերաբերմամբ այդ ժամանակամիջոցում իրագործված է կուսակցության Կենտկոմի և Յերկկոմի վորոշումը։ Մենք կազմակերպել ենք մի քանի կոմյերիտական հողամասեր։ Յերբ յես ասում եմ կոմյերիտական հողամասեր, նկատի ունեմ կոմյերիտականներին և բանվոր յերիտասարդությանը։ Բացառապես կոմյերիտականներ չունենք մենք։ Լենինյան ռայոնում 1-ին պրոմիսլային կոմյերիտական հողամասը 2-րդ կվարտալի ընթացքում իրագործել է իր ծրագիրը 92,5 տոկոսով, արդյունաբերությունը այդ վոլզ պրոմիսլայի վերաբերմամբ իրականացված է 94,3 տոկոսով։ Յերկրորդ պրոմիսլայում կոմյերիտական հողամասը իրագործում է ծրագիրը 96 տոկոսով այն ժամանակ, յերբ վոլզ պրոմիսլայի վերաբերմամբ իրագործվում է 87 տոկոսով։ 5-րդ հողամասում կոմյերիտմիության բաժինն իրագործում է 95,8 տոկոսով։

Հաշվետու-վերընտրական կամպանիայի վերաբերմամբ յեղած վորոշման մշակման ժամանակաշրջանում, մոբիլիզացիայի յենթարկելով բանվոր յերիտասարդության մասսաներին՝ արտադրական ծրագրի իրագործման համար, Լենինյան ռայոնի կոմյերիտական հողամասերը ձեռք բերին մեծ աջողություններ. նրանք վերացրին նավթի իրենց պակասորդը։ Առաջին պրո-

միսլայում կոմյերիտական հողամասն իրագործեց ծրագիրը 92 տոկոսով, սկսեց տալ 101 տոկոս։ Ցերկրորդ պրոմիսլան տալիս եր 96 տոկոս, սկսեց տալ 104 տոկոս։ Հինգերորդ պրոմիսլան տալիս եր 95 տոկոս, սկսեց տալ 100 տոկոս։

Բոլոր կոմյերիտական հողամասերում նավթարդյունաբերության վերաբերմամբ տարվող աշխատանքը հյուսվում է խոր նասոսի վրա աշխատողների աշխատանքի հետ, վորոնք արդեն այժմ Անդրյերկկոմի վորոշման իրականացման հիման վրա անցան 2-ժամյա աշխատանքի, ընդ սմին նշանակալից չափով ավելացրին աշխատանքի արտադրողականությունը։ Այստեղ կարելի յե վերլուծել խոր նասոսների վերաբերմամբ հարվածային բրիգադների աշխատանքի հետևյալ պատկերը. Լենինյան ռայոնում կոմյերիտական բրիգադան գները 12 կոպեկից իջեցրեց 11 կոպեկի։ Ծայրերի վայրեջքն ու վերելքը ավելացավ 25-ից մինչև 35, 4-րդ պրոմիսլան ծայրերի վայրեջքը 20-ից հասցրեց մինչև 28-ի։

ՆԱՎԹԱԶՏԻՉ ՅԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԸ, ՄԱՐՏԿՈՑՆԵՐԸ, ՏՐՈՒԲՁԱՏԿԱՆԵՐՆ ՈՒ ՀԵՐԹԱՊԱՇ ՋՈԿԱՏՆԵՐԸ ԳԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ ԵՆ ԱՐԴՖԻՆՊԼԱՆԸ

Նավթի մշակման վերաբերմամբ մեզանում կա Նոր-յուղի յերիտասարդական գործարան, վոր կազմակերպված է իբրև նվեր կուսակցության 16-րդ համագումարին։ Պետք է ասել, վոր նրա աշխատանքն այնքան ել բարեհաջող չե։ Այդ գործարանը զտել է նավթ ընդամենը 98,2 տոկոս, ստացել է արտադրանքներ 96,2 տոկոս, յուղեր ստացել է 94,2 տոկոս։ Արտահանման ծրագիրն իրագործել են կոմյերիտականները շնորհիվ բացառապես հարվածային աշխատանքի, իսկ հարվածային աշխատանքը հետևյալն է — անհրաժեշտ եր կանգնեցնել գործարանը վերանորոգման համար 4 որով, նրանք կանգ առան 3 որ յեվ այդպիսով

սկսեցին աշխատել մեկ որ առաջ յեվ հենց դրանով կարողացան իրենց արտահանման ծրագիրն իրագործել 14 տոկոս գերազանցումով։

Կոմյերիտականները մեծ աշխատանք տարան ժամերի փոխառության հատուցմամբ։ Նրանք բոլոր նավթազտիչ գործարանների վերաբերմամբ կամպանիա անցկացրին, ստորագրվում եյին ժամերի փոխառության, այսինքն՝ արտաժամյա աշխատանքի, պարտավորվում եյին ճեղքվածքների ժամանակ պլանից դուրս մի քանի ժամ աշխատելով հատուցանել։ Նավթազտիչ Նոր-յուղի գործարանում նրանք աշխատեցին 5000 ավելորդ ժամ։

ՇՄԻԴՏԻ ԱՆՎԱՆ ԳՈՐԾԱՐԱՆԻ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՑԵԽԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԸ

Բոլոր գործարաններին յեվ ցեխերին

Այնուհետև յես կանգ կառնեմ ոժանդակ ձեռնարկությունների վրա։ Մեզ մոտ զրեթե բոլոր ձեռնարկություններում կան կոմյերիտական բրիգադներ և ցեխեր։ Կոմյերիտական ցեխերը տալիս են, մոտավորապես, հետևյալ ցուցանիշները։

Աշխատանքի արտադրողականությունը կոմյերիտական ցեխերում ավելացավ 15 տոկոսով։ Ցեխ որինակներ կբերեմ միայն այն ձեռնարկությունների վերաբերմամբ, վորոնք անմիջական կապ ունեն շահագործման փորումի հետ։ Որկովի անվան գործարանում կոմյերիտական ցեխը Գալյա շղթաների հավաքման վերաբերմամբ անցավ աշխատանքի՝ 5-ի փոխարեն 3 մարդուց բաղկացած բրիգադով ու միևնույն ժամանակ աշխատանքի արտադրողականությունը հավաքման վերաբերմամբ 70-ից հասցրեց 200 վոտնաչափի։ Ընդ սմին գներն իջեցված եյին 20 տոկոսով յեվ այլն։

Այնուհետև գալիս է մեկուսացման բաժինը։ Կոմբինատական ցեխը, անցնելով աշխատանքի՝ 5-ի փոխարեն 3 մարդով, իջեցրեց գները 45 տոկոսով։ Շմիդտի անվան գործարանը, չուգունե-ձուլիչ կոմբինատական ցեխը իրագործեցին իրենց ծրագիրը 152 տոկոսով, ըստ վորում Անդրբերկոմի պլենումում պետք է նշել, վոր դա միակ ցեխն է Շմիդտի անվան վողջ գործարանում, կոմբինատական ցեխը, վոր 5—6 ամսվա ընթացքում սիստեմատիկորեն իրագործում է իր ծրագիրը 140, 150, 160 տոկոսով, տալիս է աշխատանքի որինակներ, բոլորովին արմատախիլ արավ անպետք ճանաչված ապրանքը (брак)։

ՆԱՎԹ ՓՈԽԱԴՐՈՂՆԵՐԻՆ՝ ՄԱՐՏԱԿԱՆ ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Նավթի փոխադրության վերաբերմամբ մենք ունենք հետևյալ պատկերը։ Ջրային տրանսպորտով նավթի փոխադրության վերաբերմամբ ծրագիրն իրագործված է ընդամենը 89 տոկոսով։

Ցերկաթուղային տրանսպորտը իր ծրագիրն իրագործել է 98,6 տոկոսով։ Ցերկաթուղային տրանսպորտի վերաբերմամբ ծրագրի թերակատարումը պետք է բացատրել վոչ թե յերկաթուղու ծառայող-կոմբինատականների կամ տեղի կուսակցության մեղքով, այլ դա բացատրվում է յերկաթուղու կայարաններում յեղած անկանոնություններով, այսինքն շնորհիվ ներքին դրության։

Տնտեսաստուգման փորձը, վորը տվավ փայլուն հետևանքներ Անդրկայարանային ռայոնում, կիրառվեց բոլոր ռայոններում։

Բոլոր նավթարդյունաբերական ռայոնների — Բայիլովի, Լենինի, Սուրախանակու, Բինագադիի և Ֆաբրիչնի ռայոնների վերաբերմամբ — մենք ունենք հետևյալ պատկերը։ Կոմբինատական փորումներ՝ 72, նավթապրոմիսլային հողամասեր՝ 5, նավթ զտիչ գործարաններ, դրույթներ՝ 5, ցեխեր, խմբեր յեվ արհեստանոցներ՝ 15, հերթապահ ջոկատ ու բաժիններ 23, բրիգադներ նավթի շահագործման վերաբերմամբ՝ 46, գործարանների յեվ կոմբինատական ցեխերի բրիգադներ՝ 124։ Այդ միայն 5 ռայոններում։ Ցեռ այստեղ չեմ մտցնում այն առանձին մասերը, այն ողակները, վորոնք ներկայումս կազմակերպված են, բայց Ազնեֆտի կողմից դեռ որինականացված չեն։ Ցեռ խոսում եմ այն կոմբինատական ձեռնարկությունների և բաժինների (участок) մասին, վորոնք Ազնեֆտի վարչության կողմից որինականացված են, այսինքն նրանց վերաբերմամբ տարվում է առանձին հաշիվ, և տրվում է առանձին ծրագիր։

Այդպիսով՝ մեզ մոտ գոյություն ունի մոտ 300 կոմբինատական տնտեսական միավոր։

Շնորհիվ փորումի, շահագործման մեջ, նավթ զտիչ գործարանում, նավթի տեղափոխության վերաբերմամբ տարվող ճիշտ աշխատանքի, շնորհիվ սոցմրցակցության և հարվածայնության արմատացման, մենք ունենք կոմբինատականների ու բանվոր յերիտասարդության սոցմրցակցության և հարվածայնության ընդգրկումի լավ հետևանքներ։ Լենինյան ռայոնում սոցմրցակցությամբ յեվ հարվածայնությամբ ընդգրկված է 94,6 տոկոս, Սուրախանիում՝ 91,6, Բայիլովի ռայոնում՝ 92,4, Բինագադիում՝ 95,4, Ֆաբրգործարանային ռայոնում՝ 90,2 տոկոս։ Այդ տեղեկությունները տրված են սոցմրցակցության և հարվածայնության կրկին հաշվեհավության ստուգումից հետո։

Ամենքը հիշում են Սուրախանիի հայտնի ճեղքվածքը, վորի վերացման գործում բոլոր կոմբինատական կազմակերպությունները ցույց տվին բացառիկ ժամանակցություն։ Ամբայր կազմակերպված եր Բագվի կազմակերպության կողմից յերիտասարդության նախաձեռնությամբ, աշխատանքի փորձի տեղափոխումը, նախաձեռնությունը, բուկսիրները — այդ բոլորը միասին տալիս է խթաններ, տալիս է հնարավորու-

թյուն հայտարարելու, վոր կոմյերիտական մասում յեղած նախաձեռնությունն արձագանգ գտավ վոչ միայն կոմյերիտական բրիգադներում, այլ և դարձավ տվյալ բաժնի, ռայոնի աշխատանքի սիստեմ ամբողջությամբ վերցրած։ Բնորոշ է, յերբ կոմյերիտական խմբում սկսեցին ստացվել հասակավոր բանվորներից հայտարարություններ՝ կոմյերիտական խմբում իրենց աշխատանքի ընդունելու խնդիրքով։ Մի կողմից՝ դա հանդիսանում է կոմյերիտմիության աշխատանքի լավ հետևանք, իսկ մյուս կողմից՝ դա վկայում է այն, վոր անմիջապես անհրաժեշտ է դիմել բոլոր միջոցառումներին նրա համար, վորպեսզի կարելի լինի դասավորել կոմյերիտական ուժերը, չհամախմբել միայն կոմյերիտական ուժերը մեկ տեղ, այլ դասավորել նրանց, միացնել արտամիութենական բանվոր-յերիտասարդության, հասակավոր բանվորների հետ։

ՏԵԽՆԻԿԱՆ, ՌԱՑԻՈՆԱԼԻԶԱՑԻԱՆ. ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՅՆ ԲԱԺԻՆՆԵՐՆ ԵՆ, ՎՈՐՈՆՑ ԴԵՌ ՅԵՎՍ ՉԻ ՏԻՐԱՑԵԼ ԲԱԳՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

Այժմ դառնանք տեխնիկայի տիրապետմանը և ռացիոնալիզացիայի պլանավորմանը։ Բագվի կազմակերպությունն ինչպես է իրագործել կուսակցության կենտկոմի վորոշումը և հատկապես կոմյերիտմիության Ցեկը։ Կոմիտեյի վորոշումը։ Հարկավոր է պլենումում ամենայն վճռականությամբ նշել, վոր մենք Բագվի վողջ կազմակերպության մեջ ունենք շատ թույլ, շատ վատ ցուցանիշեր տեխնիկայի տիրապետման, պլանավորման, ռացիոնալիզացիայի, այսինքն աշխատանքի հիմնական ողակների վերաբերմամբ։

Բագվի կազմակերպությունը, հատկապես վարին ողակները, խմբերը, հերթապահ ջոկատները, բրիգադները, բջիջները, կոմիտեները, չըմբռնեցին տեխնիկայի ուսումնասիրության նյությունը, չըմբռնեցին նրա անհրաժեշտությունը, չսովորեցին իսկապես ոգնել

բանվոր յերիտասարդությանը՝ ըմբռնելու աշխատանքի այն տեխնիկական պրոցեսը, վոր տարվում է, վորի հետևանքով պլենումում պետք է ասել ճշմարտությունը, վոր Բագվի կազմակերպությունը չի իրագործել Ցերկկոմի բյուրոյի վորոշումները, չի կարողացել տիրանալ տեխնիկային, չի կարողացել այդ տեխնիկան մատուցանել բանվոր յերիտասարդության։

Բագվի վերաբերմամբ ուսման ընդգրկումը կազմում է 80—85 տոկոս, այդպիսով յերիտասարդության 15—20 տոկոսը վոչ մի կրթությամբ ընդգրկված չեն։ Այժմ մեզ պետք են այնպիսի միջոցառումներ, վորպեսզի ապահովենք յերիտասարդության այդ մասը ուսմամբ, վորը վոչ մի տեղ չի սովորում։ Մինչդեռ՝ այդ յերիտասարդության մեծ մասը կազմված է փորողներից և այլ աշխատանք տանողներից։ Անհրաժեշտ է, վոր նրանք մասնակցություն ունենան իրենց արտադրության ծրագրները կազմելու, ռացիոնալիզացիայի մեջ և այլն։ Այդ աշխատանքն անկասկած հանդիսանում է չհաղթահարված Բագվի կոմյերիտմիության կողմից։

Ռացիոնալիզատորական աշխատանքի վերաբերմամբ մենք ունենք վորոշ հաջողություններ. որինակ՝ Նոր-յուղի գործարանի նկատմամբ մուծվել է 60 առաջարկություն, վորից 40-ը իրացված է։ Առանձին ցեխերի վերաբերմամբ մուծվում են առանձին առաջարկություններ ռացիոնալիզացիայի նկատմամբ, բայց այդ ամենը չի կրում մասսայական բնույթ, այլ միայն հատվածներ են, չկա սիստեմ, չկա սիստեմատիկ աշխատանք ձեռնարկություններում, նրանց մի քանի անգամ կազմակերպել են, բայց նրանք չեյին գտնում իրենց տեղը։ Ցես այդ վերագրում եմ ԲԿ-ի և տեղական բջիջների անբավարար ղեկավարությանը։

Բայց այդ ռացիոնալիզատորական միջոցառումները, վորոնք այնուամենայնիվ կիրառվում են կոմյերիտմիության գծով, տալիս են ծախսերի ահագին նվազումն, վորն արտահայտվում է մի քանի հարյուր հազար ռուբ. նավթարդյունաբերության վերաբերմամբ։

Զափարիձեյի անվան գործարանում ռացիոնալիզատորական առաջարկությունները տնտեսեցին 300 ռուբլի։ Շմիդտի անվան գործարանի վերաբերմամբ ներքին ռեսուրսների մոբիլիզացիայի հետ միասին դա արտահայտվում է քսան հազար ռուբլով։ Այդպիսով՝ առանձին ռացիոնալիզատորական միջոցառումները տալիս են լավ հետևանքներ, բայց չեն ստացել լայն գործադրություն։

Ինչ վերաբերում է գյուտարարության, ապա այստեղ բանը վատ է։ Կոմբինատների շրջանում մենք ունենք գյուտարարության յեզակի դեպքեր։ Նրանց մեջ մենք վոչ մի աշխատանք չենք տանում, և նրանք տառապում են, չստանալով վոչ մի ոժանդակություն, վորը վատ է անդրադառնում նրանց աշխատանքի վրա։

ԲԱՐՁՐԱՑՆԵԼ ԿԱԴՐԵՐ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՎՈՐԱԿԸ

Նավթարդյունաբերության համար կադրերի պատրաստության վերաբերմամբ մենք ունենք մեզ մոտ ֆաբրիկա-գործարանային և լեռնարդյունաբերական աշակերտության դպրոց։ Յեթե բանակության վերաբերմամբ Բազվի կազմակերպությունը ծեռք բերավ հաջողություն, թիվը հասցրեց 4000-ից ավելի յեվ սեպտեմբերի կազմը կավելացնի նաև 3000, ապա պատրաստության վորակի կողմից բանը շատ վատ է։

Կան շատ փաստեր, յերբ շրջանավարտ ընկերները չեն ոգտագործվում ըստ կոչման, կան շատ փաստեր, յերբ տնտեսավարը չի ընդունում իր մոտ փորոտին, վորին շրջանավարտ է տվել լեռնարդյունաբերական դպրոցը։ Տնտեսական կազմակերպությունների կողմից դեռ մինչև այսոր ել դրսևորվում է ֆաբրիկա-գործարանային լեռնարդյունաբերական դպրոցների թերագնահատումն։ Այդ՝ մեկ կողմից, իսկ մյուս կողմից՝ այստեղ մեղքը կոմբինատինն է, վորը բավականաչափ չի զբաղվում պատրաստվող ուժերի դասավորությամբ, հաշիվ չի տանում այդ ուղղությամբ։

Առանձնապես վատ դրության մեջ է թուրքական կադրերի արմատացումն արտադրություններում։ Յերկրային կոմիտեյի պլենումում պետք է ամենայն վճռականությամբ նշել, վոր Բազվի կազմակերպության համար ցավոտ կողմը հանդիսանում է թուրքական յերիտասարդության արմատացումը նավթարդյունաբերության արտադրության բոլոր ճյուղերում։ Մենք ունենք շատ փաստեր, յերբ 1050 բանվոր յերիտասարդությանն ընկնում է թուրք յերիտասարդությունից 50—60 մարդ։ Այդպես է որինակ Շմիդտի անվան գործարանում։ Բնորոշ է այն, վոր բոլոր արդյունաբերական միավորներում, արհեստանոցներում, գործարաններում շատ թույլ է ընդգրկված թուրք յերիտասարդությունը։ Դուք ավելի շատ հանդիպում եք թուրք յերիտասարդությանն առանձին փորող նավթահորերում։ Այստեղ պատկերը դարդ է։ Վորակյալ բանվոր յերիտասարդություն ի հաշիվ տեղական ազգությունների մենք պատրաստում ենք շատ վատ։ Այստեղից, անկասկած, հետևում է յեզրակացություն միջոցառումների անհրաժեշտության մասին արտադրության մեջ թուրք յերիտասարդություն արմատացնելու վերաբերմամբ։

ԿՆՈՋ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐՄԱՏԱՑՈՒՄԸ ՄԱՐՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ Է

Ի՞նչ ունենք մեզ մոտ կնոջ աշխատանքի արմատացման վերաբերմամբ արտադրության մեջ։ Հոկտեմբեր 1-ին վոչ Ազնեֆտում մենք ունենք 1471 կին, այսինքն 3,5 տոկոս։ Վորակյալ կանայք ունենք 36, այսինքն 0,3 տոկոս։ Ապրիլի 1-ին կանանց քանակն ավելացավ ու հասավ մինչև 2038-ի։ Այժմ խնդիր է դրված կուսակցության և կոմբինատիության առաջ կնոջ աշխատանքի արմատացման մասին արտադրության մեջ, առանձնապես նավթարդյունաբերության գծով։ Այնտեղ կան շատ բաժիններ, ուր կի-

բառում ենք կնոջ աշխատանքը։ Կանայք կարող են լինել յուղող, տեխնիկական ձեռք, աշխատել ճախարակումի, ռանդելու, պտուտակ պատրաստող կայանքների (станок) վրա յեվ այլն։ Այդ բոլոր ոլորտներում կնոջ աշխատանքը կիրառելի յե, և կնոջ աշխատանքի արմատացման խնդիրն արտադրության մեջ Բագվի կոմյերիտմիության համար անհրաժեշտ է, իբրև գլխավոր ոլորտի, վորովհետև մենք դեռ այդ ուղղությամբ բոլորովին բան չենք արել, բացառությամբ ֆաբրիկո-գործարանային գծով տարվող աշխատանքի։ Այդտեղ մենք ունենք վորոշ հաջողություններ, ընդգրկել ենք ուսուցումամբ մի քանի հարյուր աղջիկ, բայց արտադրության մեջ դեռ անբավարար է, ավելի ճիշտ կլիներ ասել, դրանով դեռ բոլորովին չենք զբաղվել։

ԿՈՒԼՏՈՒՐ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՒՄ Է ԲԱԳՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՋ ԲԱՑ ՏԵՂԸ

Առանձնապես վատ դրության մեջ է բանվոր յերիտասարդությանը կուլտուրական սպասարկություն ցույց տալու գործը։ Մենք Բագվի կազմակերպության մեջ ունենք 2—3 կոմմունա, վորոնք կազմակերպված են յերիտասարդության ջանքերով, կոմյերիտմիության ուժերով։ Այդ արդեն պետք է վկայե այն մասին, վոր այդ ուղղությամբ տարվում է անբավարար աշխատանք։ Իսկ բանվոր յերիտասարդությունը, վորն ապրում է հանրակացարաններում, վորը չունի մշտական բնակավայր, բնակարան,—մեծ քանակություն է կազմում փորելու բաժնում, նավթարդյունաբերության մեջ, ավելի, քան վորևե այլ տեղ։ Նավթարդյունաբերության բանվոր յերիտասարդության համար անհրաժեշտ է նախապատրաստել բոլոր պայմանները՝ կենցաղային յեվ նյութական։ Դա հանդիսանում է կարևոր խնդիր Բագվի կոմյերիտմիության

համար։ Այն աշխատանքը, վոր տարվել է այդ ուղղությամբ, այսոր մեզ չի կարող բավարարել։ Մենք չենք իրագործել Անդրյերկկոմի բյուրոյի՝ գիշերվա հերթին աշխատողների սպասարկության մասին կայացրած վորոշումները։ Վորոշ փորձեր այդ ուղղությամբ յեղել են, բայց եյապես մենք չենք կարողացել իրացնել այդ վորոշումը, չկարողացանք հասնել այն դրության, վորպեսզի գիշերվա հերթին փորումի մեջ, նավթ զտիչ գործարաններում, խոր նասոսների վրա աշխատողներն սպասարկություն գտնեին վորևե կուլտուրական հիմնարկության կողմից, չնայած այն հանգամանքին, վոր Բագվում մենք ունենք շատ հնարավորություններ՝ կանոնավոր հանգիստ տալու համար, ճիշտ ոգտագործելու համար բանվոր յերիտասարդի, կոմյերիտականի ազատ ժամանակը, վորն իրավունք ունի ոգտվելու այդ հանգստից և վորը մենք պարտավոր ենք վերապահելու նրան։

Բագվում ծով՝ ինչքան կուզես, արվարձաններ՝ ինչքան կուզես, բայց դեռ եյապես ձեռնամուխ չենք յեղել այդ գործին, չկարողացանք կազմակերպել այնպես, վոր ծովային ոդը, ինքը ծովն ու Բագվի քաղաքամերձ վայրերն ոգտագործվեին այնպես, վոր հնարավորություն տային բանվոր յերիտասարդությանը իսկապես հանգստանալու ազատ որերին, կուլտուրապես սպասարկություն տրվեր նրան իր ազատ որերին։ Դա դեռ յեվս կազմում է Բագվի կազմակերպության բացը։

Կուսակցության կենտկոմի և կոմյերիտմիության վորոշումների իրագործման մասի վերաբերմամբ տարվող ու տարված աշխատանքի շնորհիվ մենք ունենք նշանակալից հաջողություններ Բագվի կազմակերպության աճման մեջ, այսինքն մենք ունենք աճումն առաջին կիսամյակի ընթացքում, 1-ին և 2-րդ կվարտալների ընթացքում Բագվի կազմակերպության վերաբերմամբ ներառյալ հուլիսը—13.013 հոգի։ Դա հանդիսանում է բանվոր յերիտասարդության զբաղման

յեվ արտադրական ծրագրի իրագործման լավագույն ցուցանիշը, ինչպես նաև բանվոր յերիտասարդության ակտիվությունը գլխավորելու կարողության, նավթարդյունաբերության վճռական մասերում իր ուժերի ճիշտ դասավորման ցուցանիշը։ Այդ բոլորը միասին վերցրած ցույց տվավ առանձին կոմյերիտական ողակների աշխատանքը, տալով աճումն Բաքվի կազմակերպության 13.013 մարդ։

Ի՞նչ տեմպերով եր ընթանում աճումը։ Դա բնորոշ է նրա համար, վորպեսզի տեսնվի կուսակցության Կենտկոմի և ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի վորոշման իրագործումը նավթի վերաբերմամբ։ 193՝ թվականի առաջին կվարտալը, այսինքն Կենտկոմի վորոշումը նավթի վերաբերմամբ և Համկոմկուսի (բ) Անդրյերկկոմի վորոշումը տալիս է 3111 մարդ աճումն։ Յերկրորդ կվարտալը, ՀԼԿՅԵՄ-ի Անդրյերկկոմի ռեզոլյուցիան Բաքվի կազմակերպության աշխատանքի մասին նավթի վերաբերմամբ, հաշվետու-վերընտրական կամպանիան, ընկ. Ստալինի ճառը և այլն տալիս է Բաքվի կազմակերպությանը աճումն 6144 մարդ։ Միայն հուլիսը տալիս է աճումն 1905 մարդ։ Ընդհանուր առմամբ դա ներկայացնում է հետևյալ պատկերը։ Յեթե մենք Բաքվի կազմակերպության մեջ ունեյինք 23.016 մարդ, վորոնցից բանվորները՝ 65 տոկոս, ապա արդեն հուլիս 1-ին մենք ունենք 34.269 մարդ յեվ բանվորական կազմը 71,8 տոկոս։ Կազմակերպության մեջ թուրքեր ունեյինք 35,7 տոկոս։ Բանվոր յերիտասարդության հոսանքը, վոր մենք ունենք մեզ մոտ Բաքվի կազմակերպության մեջ, նույնպես գալիս է ի հաշիվ թուրք բանվոր յերիտասարդության։

Մենք այժմ արդեն ունենք տասնյակ ձեռնարկություններ՝ 100 տոկոսով կոմյերիտականացված, այսինքն կոմյերիտական կազմակերպության կողմից ընդգրկված 5—10 մարդ. յեվ այդ ել այն ընկերները, վորոնք հենց նոր են յեկել արտադրության մեջ կամ վռնդված են կազմակերպությունից։

Դա հնարավորություն է տալիս ասելու, վոր Բաքվի կազմակերպության աճումը՝ նրանում բանվոր միջուկի և հիմնական բնակչության հավելումով գրեթե կրկնակի յե իրավունք տալիս հայտարարելու, վոր Բաքվի կազմակերպությունը ճիշտ և կիրառում կոմյերիտմիության 9-րդ համագումարի վորոշումը յեվ այդ տեսակետից ունի դրական արդյունքներ։

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՀԼԿՅԵՄ-Ի ՅԵՐԿՐԱ՞ԻՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ ՄԵՆՔ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԵՆՔ ՆՈՐ ՇԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ, ՆԱՎԹԻ ՅԵՐ ՐՈՐԴ ՀԸՆԳԱՄՅԱԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Վողջ աշխատանքը Բաքվի կազմակերպությունը տարել է դրված խնդիրների իրականացման հիման վրա, կուսակցության Բաքվի կոմիտեյի և կոմյերիտմիության Կենտկոմի ղեկավարության ներքո, և մենք ձեռք բերինք նշանակալից հաջողություններ կոմյերիտական կարգադրությունների վերաբերմամբ ծրագրների իրագործման յեվ գերակատարման գործում, բայց դեռ ես չենք ձեռք բերել բոլոր անհրաժեշտ հաջողություններ, բոլոր անհրաժեշտ առաջընթացումներ նավթարդյունաբերության գծով։

Մեր առջև դրված խնդիրների իրականացումը հարկավոր է միայն վողջ հասարակայնության մոբիլիզացիայով և առաջին հերթին կոմյերիտմիության համար—վողջ բանվոր յերիտասարդության մոբիլիզացիայով արդիինպլանի անպայման իրագործման, առանձին ձեռնարկությունների խնդիրների անպայման իրագործման շուրջը։

Բաքվի կազմակերպության համար այսոր գլխավոր հանգուցային հարցերը հանդիսանում են՝ մասնակցություն Ազնեֆտի տեխնիկական ղեկավարության վերաշտկումի մեջ՝ ինչպես կենտրոնում, այնպես ել տեղերում, ստուգումն յեվ նախապատրաստություն տեխնիկական կադրերի, ստուգումն բարձր

10545

կրթական հաստատությունների, բարձր տեխն. կրթական հաստատությունների յեվ տեխնիկումների, մասնակցություն նավթարդյունաբերության վերաբերյալ գոյություն ունեցող սարքավորման դրսեվորումի յեվ ոգտագործման մեջ, բոլոր խմբերի, բոլոր հարվածային բրիգադների, մրցակցողների անցումն տընտեսական հաշվին (хозрасчет)։

Առանձին ողակնեղում, առանձին խմբերի մեջ Բագվի կազմակերպության այդ ուղղությամբ արված փորձերը դեռ. չեն ստացել լայն գործադրություն։

1931 թվականին Ազնեֆտի առջև դրված գլխավոր խնդիրները—պլանավորումն, ռացիոնալիզացիան, տեխնիկան—մինչև որս եվ մնում են։ Արտադրության մեջ բոլոր ողակներում թուրք կադրերի զետեղումը, առանձնապես ձեռնարկություններում—այդ բոլորը միասին հանդիսանում ե մի աշխատանք, վորն անհրաժեշտ ե կատարել մոտ ժամանակներս՝ կուսակցության և կառավարության վորոշումների իրականացման համար, Ազնեֆտի առջև դրված խնդիրների իրագործման ու յերկիրը վառելանյութով ապահովելու համար։

Ինձ թվում ե, թե այսուհետեվ ել աշխատելով կոմյերիտմիության Յերկրային Կոմիտեյի, կուսակցության Բագվի Կենտրոնական Կոմիտեյի, կոմյերիտմիության կենտրոնական կոմիտեյի դեկավարության ներքո, Բագվի կազմակերպությունը կկարողանա ձեռք բերել առավել եվս ցուցանիշեր կոմյերիտական ողակների աշխատանքի մեջ, կկարողանա հետեվյալ պլենումին անցնել ավելի բարձր վորակական ցուցանիշերով՝ աշխատանքի մեջ։ Այն խնդիրները, վորոնք ծառացած են Ազնեֆտի առջև, հանդիսանում են մեր խնդիրները։ Բագվի կազմակերպությունը Բագվի վողջ վաշտի հետ միասին ձեռք ե առնում բոլոր միջոցներ, վորպեսզի 1931 թվականի ծրագիրն իրագործված լինի, բայց յեվ գերազանցված։ (Ծափահարություններ)։

ЗКСМ 5
9-93

ՀՀ Ազգային գրադարան
NL0184991

ՊԵՏ ԿԱՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ZUUՊ-Арм ССР
Ս. ԱՄ. Ա. ՄԱՍՆԻԿՅԱՆ